ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ»

ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ Հայոց լեզու և գրականություն

Թեմա ԴՊՐՈՑԱԿԱՆ ԹԵՍՏԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՁԵՎԵՐԸ

Հետազոտող՝ Լուսինե Մինասյան

Սյունիքի մարզի Տաթև համայնքի Խոտի միջնակարգ դպրոց հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Ղեկավար՝ Նելլի Ղուշունց

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն _____ էջ 2
2. Հիմնախնդիրներ_____էջ 3
3. Հետազոտության նպատակը և նորույթը_____էջ12
4. Ամփոփում _____էջ 13
5. Ամփոփում օտար լեզուներով_____էջ 14
6. Օգտագործված գրականություն_____էջ 15
7. Կարծիք_____էջ 16

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԹԵՍՏԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՁԵՎԵՐԸ

Բանալի բառեր- Կարճ պատասխան , հարցադրումներ , առաջադրանքներ, հայտորոշիչ թեստ, գիտելիքների ստուգման թեստ, ամփոփիչ աշխատանք, գիտելիք:

Ключевые слова- короткий ответ, вопросы, задания, диагностический тест, проверка знаний, окончательная работа, знание.

Key words: Short Answer, Questions, Tasks, Identification Test, Knowledge Test, Final Test, Knowledge

Ներածություն

Ուսումնառության ընթացքում իրականացվող գնահատումը գործընթաց է, որով բացահայտվում և վերլուծությունների միջոցով վերահսկվում են ուսուցման արդյունքները և դրանց համապատասխանությունը պետական կրթական չափորոշչի պահանջներին: Գնահատումը շարունակական, անընդհատ գործընթաց է: Այն կազմված է քանակական և որակական գնահատումներից: Գնահատումը տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության ինչպիսին մակարդակի է հասել սովորողը: Այդ տեղեկատվությունը հավաքելու համար կարելի է օգտագործել գնահատման բազմաթիվ միջոցներ: Դրանք կարող են ներառել բազմաթիվ դիտարկումները, գրավոր թեստերը, տնային աշխատանքներ, հետազոտական բնույթի աշխատանքներ, նախագծեր, բանավոր հարցումներ, սովորողի մասին կատարած գրառումների վերլուծությունը: Դրանց մեջ իր ուրույն տեղն ունեն գրավոր թեստերը, որոնք գիտելիքների ստուգման ժամանակակից արդյունավետ եղանակներից են: Թեստեր կազմելիս անհրաժեշտ է չափելի դարձնել գնահատման ենթակա արդյունքը: Պետք է որոշել, թե ի՞նչն ենք չափում (սովորողի

գիտելիքը, կարողությունը, հմտությունը, առաջընթացը և այլն), նաև հստակեցնել, թե ի՛նչ նպատակով է կատարվում չափումը:

Հիմնախնդիրներ

Կրթական տարբեր ոլորտներում թեստային աշխատանքի տարածվածությունը:

Թեստային աշխատանքի առավելությունները:

Թեստային աշախատանքի ցավոտ կողմերը՝ հարցերի <<մատչելիությունն ու խճճվածությունը>>:

Թեստը որոշակի նպատակով կազմված, ուղղորդող ցուցումներով հարցերի շարք է, սովորողներին գնահատելու և նրանց ուսումնական գործունեությունը արժևորելու համար: Հարցը առաջադրանք կատարելու հանձնարարական է, որն ակնկալում է աշակերտի պատասխանը: Այն անհրաժեշտ է ձևակերպել պարզ, հստակ: Հարցը պետք է ունենա միանշանակ պատասխան:[[1]¿ç 26]: Թեստեր կազմելիս օգտագործում են հիմնականում հարցերի հետևյալ տեսակները.

1. մեկ ճիշտ պատասխանի ընտրությամբ
2. համապատասխանեցման
3. բաց թողածը լրացնելու
4. կարճ պատասխան պահանջող
5. ընդարձակ պատասխան պահանջող
6. ստեղծագործական մոտեցում պահանջող:

Ներկայացնենք աշակերտների գիտելիքների, կարողությունների ստուգման թեստերից որոշ հարցերի նմուշօրինակներ:

ա.Մեկ ճիշտ պատասխանի ընտրությամբ .

Օրինակ՝

Ճիշտ պատասխանի թվահամարը շրջանակի մեջ վերցրու:

Ա. Ձայնավորից հետո ռ-ն օ՝

1. արտասանվում է
2. չի արտասանվում

Բ.Նշիր այն բառը, որի ,մեջ գրվում է Է՝

1. վեր-լակ
2. վայր-ջք

Գ.Ր-ից հետո լսվող փ-ն գրվում է ք՝

1. եր-եք , նր-ազգաց
2. նր-ազգաց, ճամ-որդ

Թեստային առաջադրանքների այս տիպը պահանջում է, որ ճիշտ կամ սխալ պատասխանները հստակ ձևակերպված լինեն: Լավ կազմած առաջադրանքներում սխալ պատասխանները հաճախ ճշմարտացի են թվում: Սխալ պատասխանները անվանում են *շեղիչներ* (դիստրակտորներ):[²¿ç173] Այսպիսի առաջադրանքի առավելությունը այն է, որ դա հեշտ է ստուգելն ու գնահատելը, գնահատումն օբյեկտիվ է, բայց թերությունն այն է, որ դժվար է նման առաջադրանքներ կազմելը, որտեղ հարցերը միանշանակ լինեն, իսկ ապակողմնորոշող պատասխանները ճշմարտանման:

բ.Համապատասխանեցման կամ համաձայնեցման առաջադրանքներ

Օրինակ՝

Դասավորել ճիշտ հաջորդականությամբ.

1.Անաղարտ	1.ծնել	_____
2. Բարկ	2.հովիկ	_____
3.Երախտապարտ	3.կիզիչ	_____
4.Զեփյուռ	4. Մաքուր	_____
5.Երկնել	5.շնորհակալ	_____

գ.Կարճ պատասխան պահանջող , հարցադրումներ կամ առաջադրանքներ

Սրանք առաջադրանքներ են, որոնց պատասխանը պատրասի չի տրվում, սովորողը ինքը պիտի պատասխանի այդ հարցադրումներին, հանդես բերի գիտելիքի կիրառում, ինչպես նաև ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում: Սակայն այսօրինակ առաջադրանքների պատասխանները ևս ծավալուն չեն , դրանք տատանվում են 1-ից մինչև 5 բառի սահմանը: Այսպիսի առաջադրանքում սովորողը պետք է լրացնի նախադասության մեջ բաց թողնված բառը կամ բառերը: Այս առաջադրանքների նպատակն է ստուգել տեսական նյութի, կանոնների իմացությունը:

Օրինակ՝

Շարունակել և լրացնել շարքը

Հեքիաթները լինում են 3 տեսակի՝

1. _____
2. _____
3. _____

դ. Ընդարձակ պատասխան պահանջող, ստեղծագործական մոտեցում պահանջող հարցադրումներ կամ առաջադրանքներ

Այսպիսի պատասխան տրվում է այնպիսի հարցադրումների կամ առաջադրանքների , որոնք նախատեսված են սովորողի տրամաբանության, վերլուծելու, համադրելու, դատողություններ անելու, որոշակի եզրահանգման գալու կարողությունների բացահայտման համար: Օրնակ՝ բնութագրել այս կամ այն հերոսին, նկարագրել որևէ երևույթ և այլն:

Հասկանալի է, որ սա կարող է հանձնարարվել իբրև առանձին առաջադրանք կամ էլ թեստային առաջադրանքներից վերջինը լինի և տրվի որոշակի սահմանափակումով, ասենք՝ շարադրիր 4-5 նախադասությամբ: Բայց այն պետք է գնահատվի սանդղակով՝ անաչառ մոտեցում ապահովելու համար: [³¿ç5]

2. Ուսումնական գործընթացում թեստերի կիրառումը ունի մի շարք առավելություններ՝

- հնարավորություն է տալիս ուսուցչին փոքր մասերով ստուգել ուսում նական նյութի յուրացումը,
- կարողանում է արագ գնահատել մեծ թվով սովորողների,
- նվազեցնում է սուբյեկտիվ գործոնը,
- հնարավորություն է տալիս պարզելու յուրաքանչյուր սովորողի դժվա-րությունները՝ շնորհիվ առաջադրանքի փուլային կատարման,
- պարզելու սովորողի « ց ա վ ո տ կ ե տ ը » , վերացնելու նկատված թե-րությունները, նպաստելու սովորողի առաջընթացին:

3. **Թեստը պետք է ունենա հստակ *հատկորոշիչները:*** Դրանք կազմում են հարցարանի տեսական հենքը և տեղեկություն են տալիս հետևյալ հարցերի վերաբերյալ.

- · ո՞ր դասարանի համար է նախատեսված,
- · ի՞նչ նպատակ է հետապնդում, որ թեմայից կամ թեմանեից են ստուգվում սովորողի գիտելիքներն ու հմտություններ,
- · առաջադրանքների քանակը,
- · թեստի գնահատման առավելագույն միավորը,
- · հատկացված ժամանակը,
- գնահատման չափանիշների միավորային աղյուսակ, որտեղ տրվում է յուրաքանչյուր առաջադրանքի համարը, այդ առաջադրանքի առավելագույն միավորը և դրա գնահատման յուրաքանչյուր քայլի միավորը: Թեստը կազմվում է ըստ հատկորոշիչների, որտեղ ստուգվող թեմաները պետք է լինեն հստակ, ստուգվող գիտելիքը և հմտությունները խիստ որոշակի: Կախված նպատակից կիրառվում են տարբեր տեսակի թեստեր, որոնք կարող են լինել տարբեր բովանդակությամբ, կառուցվածքով, գնահատման ձևով: [4¿ç]

Կիրառվում են թեստերի հետևյալ տեսակները.

- ընդհանուր գիտելիքների ստուգման
- հայտորոշիչ
- ամփոփիչ
- տեղակայման թեստեր:

Ամփոփիչ թեստի նմուշօրինակ

Հատկորոշիչներ

Ուսումնական առարկան Հայոց լեզու

Հա ղցա ղա նի համարը 1

Հա ղցա ղա նի տարատեսակը Թեմատիկ գրավոր աշխատանք

Դասարանը 10-րդ

Թ եմա ները Բառակազմություն

Առաջադրանքների քանակը 15

Առաջադրանքների առավելագույն միավորը 30

Կատարման համար նախ ատեսված ժամանակը 40- 45ր

Գնահատման չափանիշների միավորային աղյուսակ.

1.	1-3	1
2.	4-6	2
3.	7-9	3
4.	10-12	4
5.	13-15	5
6.	16-18	6
7.	19-21	7

8.	22-25	8
9.	16-28	9
10.	29-30	10

1.Ո՞ր շարքում են միայն հնաբանություններ. /1/

1. Աշտե, պարեգոտ, պատմուճան
2. Զուլարան, ոսկեզօծ, մեջք
3. Մամլո, բդեշխ, տեսախցիկ

2.Ո՞ր շարքում են միայն միջածանցներ: /1/

1. Ավետ, ան , եղեն
2. Ան, են , ն, չ
3. Ային, ական, ք

3.Ո՞ր խոսքի մասը կարելի է ստանալ -բար, -պես, -որեն, -ովին ածանցներով: /1/

_____

4.Տողասկզբի ածանցներով և յուրաքանչյուրի դիմացի շարքի բառերից մեկի արմատով ստացիր նոր բառ: /3/

-ովի- տափակ, կորով, կարեվեր, բազմահնար _____

Գեր – խնդրագիր, ծիածան, արփի, մորի _____

-ակ- գրչություն, անոնոշ, տարալեզու, գլխատառ _____

5.Դեմ դիմաց գրված բառերից յուրաքանչյուրի մեկական արմատով կազմիր մեկական բարդ բառ: /2/

Տնտեսվար-գինետուն _____

Սառցալեռ – արյունարբու _____

6.Ո՞ր շարում է համադրական բարդությունը: /1/

1. Տուն- թանգարան
2. Լաց լինել
3. Ծանրամարտիկ

7.Ո՞ր շարքում են անհոդակապ բարդությունները: /1/

1. Ծառուղի, խճանկար, կշռադատել
2. Շաքարավազ, արյունարբու, բնօրրան
3. Թխածամ, քաղցրանուշ, թանապուր

8.*Փորձ* արմատով կազմիր բարդություններ : /2/

Հոդակապով _____

Անհոդակապ _____

9.Տրված բառերով կազմիր հարադրություններ: /3/

Ամառ առնել _____

Թև ընկնել _____

Ներս ձմեռ _____

10.Ո՞ր հապավման գրության մեջ կա սխալ: /1/

1. ՅՈՒՆԵՍԿՕ
2. շինհրապարակ
3. Բուհ

11.Գրիր մեկական հապավում: /3/

1. Տառային _____
2. Բառամասային _____
3. Խառը _____

12.Ո՞ր պնդումն է ճիշտ. /1/

1. Տառային հապավումներն անհրաժեշտության դեպքում տողադարձվում են:
2. Հապավված բաղադրիչներից հետո կետ չի դրվում:
3. Տառային հապավումները հիմնականում գրվում են փոքրատառով:

13. Ընդգծված բառերը ենթարկիր բառակազմական վերլուծության: /5/

Մի **թագավոր** սովորություն ուներ ժողովրդի մեջ ծպտված շրջել՝ իմանալու իր մասին ժողովրդի ունեցած **կարծիքը**: **Ականակիր** գիշերներից մեկում դերվիշի **հագուստով** նա քաղաք դուրս եկավ: Երկար **շրջագայելուց** հետո մի նեղ փողոցի անկյունում նա հանդիպեց ինչ-որ ստվերների: Մոտ եկավ: Ստվերները, տեսնելով, որ մոտեցողը դերվիշ է , որին իրենք սուրբ մարդ էին համարում, գրկաբաց ընդունեցին նրան: Նրանք պատմեցին, որ այդ գիշեր որոշել են թագավորի գանձարանը կտրել, և առաջարկեցին իրենց հետ ընկերանալ՝ խոստանալով ավարից նրան էլ բաժին հանել: Ծպտված թագավորն իր համաձայնությունը տվեց:

_____

_____

_____

_____

_____

_____

14. 3-4 նախադասությամբ շարունակիր, թե ինչ եղավ հետո: /2/

_____

_____

_____

_____

_____

_____

15. Տեքստից դուրս գրիր 3 հարաղիր բարդություն : /3/

Հետազոտության նպատակը և նորույթը

Հաջողված թեստ ստեղծելու համար կան մի շարք գործոններ, որոնք անպայման պետք է հաշվի առնել: Դրանք են՝ թեստ կազմելու հիմնական սկզբունքներների իմացությունը և առաջադրանքների համակարգի ճիշտ ընտրությունը: Թեստ կազմելիս պետք է հաշվի առնել հետևյալ պահանջները

Թեստը պետք է լինի հուսալի: Հուսալիություն ասելով հասկանում ենք, որ թեստի ստուգման արդյունքները, անկախ հանգամանքներից, պետք է հաստատուն լինեն: Տարբեր պայմաններում, տարբեր ստուգողների կողմից նույն թեստի ստուգման և գնահատման արդյունքները գնահատման նույն սկզբունքները հանդես բերելու դեպքում տարբերություն գրեթե չպետք է լինի:

Թեստը պետք է լինի հավաստի: Հավաստիություն նշանակում է, որ թեստը պետք է ծառայի իր նպատակին, այսինքն պետք է ստուգի այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք նախատեսված էր ստուգել: Հավաստի թեստը ապահովում է կոնկրետ նպատակին հասնելու հաջողությունը: Թեստը հավաստի է, եթե դրա բարդության աստիճանը համապատասխանում է սովորողի պատրաստվածության մակարդակին: Համապատասխանություն նշանակում է, որ միջին պատրաստվածություն ունեցող սովորողի համար թեստը ոչ շատ հեշտ և ոչ էլ շատ դժվար պետք է լինի: Այն պետք է լինի միջին բարդության: Եթե թեստը սովորողի համար շատ հեշտ է, կամ՝ շատ բարդ, նշանակում է թեստը հուսալի չէ :

Թեստը պետք է լինի արդյունավետ: Արդյունավետ է համարվում այն թեստը, որը արդյունավետ է չափում սովորողի գիտելիքը, կարողություններն ու հմտություններն: Բովանդակության տեսակետից արդյունավետ է այն թեստը, որը ընդգրկում է ստուգվող թեմայի կամ թեմաների հիմնական կարևոր հարցերը: Թեստը արդյունավետ է, եթե թեստի դժվարության աստիճանը համապատասխանում է սովորողի պատրաստվածության մակարդակին:

Թեստը պետք է լինի գործնական կամ իրականանալի ՝ թե՛ տեխնիկական, թե' ֆինասական, թե' ժամանակի տեսակետից: Թեստը կազմելիս շատ կարևոր է առաջադրանքների տիպերի ճիշտ ընտրությունը: Թեստում առաջադրանքները պետք է դասավորվեն պարզից դեպի բարդը սկզբունքով՝ **ըստ Բենջամին Ս. Բլումի ճանաչողական վարքի աստիճանակարգի (տաքսոնոմիայի):** [5¿ç]

Թեստը կազմելիս առաջադրանքները ներառվում են գիտելիքի պարզ իմացություն, ըմբռնում, կիրառում և ավարտվում բարձրակարգ ճանաչողական հմտություններով՝ վերլուծություն, համադրում և արժևորում:

Ամփոփում

Թեստային աշխատանքներով ստուգումը ունի և՛դրական,և՛ բացասական կողմեր:Այն չպետք է ինքնանպատակ լինի, այսինքն՝ ձևական, միայն պլան կատարելու համար. այդ սկզբունքով դասավանդող ուսուցիչներ կան և քիչ չեն: Եթե նպատակային թեստ կազմվի, երկու և ավել տարբերակներ ունենա, ոչ վաղ անցած թեմային համապատասխանի, կծառայի իր նպատակին: Իհարկե, թեստը գիտելիքի ստուգման լավագույն ձև չէ, բայց ես կարծում եմ մնացած գրավորներն էլ լավագույն ձև չեն: Իսկ ինչ վերաբերում է արտագրելուն, համամիտ եմ, անխուսափելի են արտագրությունները, միշտ էլ ճարպիկները միջոց գտնում են արտագրելու, անգամ եթե լինի թելադրություն կամ ստուգման մեկ այլ եղանակ:Եթե անհրաժեշտ հսկողությունը գրավորների ժամանակ բացակայեն, արտագրությունը անխուսափելի կլինի: Բայց կարելի է այնպես անել, որ թեստերն էլ ծառայեն աշակերտի գիտելիքի ստուգման, ուսուցման և գիտելիքի ամրապնդման նպատակին: Այսինքն՝ թեստերը կազմել այնպես, որ աշակերտը ոչ միայն ընտրի ճիշտ տարբերակը, այլև մտածի ու լրացնի որոշ կետեր ու պատասխաններ, լուծի, կատարած աշխատանքի քայլերը ցույց տա և այլն: Կարճ ասած, թեստեր կազմելու ընթացքում աստիճանաբար կարող ենք գտնել արդյունավետ ձևեր:

PRINCIPLES AND FORMS OF SCHOOL TEST DEVELOPMENT

MINASYAN LUSINE

Summary

Testing has "positive" and "negative" sides. There are many teachers who teach according to this principle. If a purposeful test is made, it has two or more options, it corresponds to the topic covered earlier, it will serve its purpose. Of course, a test is not the best way to test knowledge, but other written work, I think, is also not the best way. As for rewriting, I agree, transcripts are inevitable, there are always clever means of rewriting, even if there is a dictation or other means of verification. But you can make sure that the tests serve to test the knowledge of the student, teaching the consolidation of knowledge. That is, to make tests so that the student not only chooses the correct option, but also thinks and completes some points and answers, solves them, shows the stages of the work done, etc.In short, we can gradually find effective options, conduct tests.

ПРИНЦИПЫ И ФОРМЫ РАЗРАБОТКИ ШКОЛЬНОГО ТЕСТА

МИНАСЯН ЛУСИНЕ

Резюме

У тестирования есть положительные и отрицательные стороны. Это не должно быть самоцелью,то есть фиктивно , есть не мало учителей которые преподают по этому принципу,только для того чтобы составлять план. Если составить целевой тест,чтобы было два и более варианта,и чтобы он соответствовал пройденной ранее теме,то он будет служить своей цели . Конечно тест не лучший вариант проверить свои знания,и я думаю письменные работы не лучше их.Что касается списывания,я соглашусь они неизбежны. Всегда найдутся шустрые которые найдут способ списать ,будь это контрольная или что-то другое .Если не будет строгой наблюдательности во время письменных работ, то списывание будет неизбежным. Но можно сделать так, чтобы тесты служили ученику проверкой своих знаний, и служили их на прочность. То есть , нужно составлять тесты так, чтобы ученик не только выбирал правильный вариант, но ещё и подумал над решение других задач,заполнил некоторые пункты и ответы, показать этапы проделанной работы и т.д . Одним словом при составлении тестов мы постепенно сможем найти самый эффективный .

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Միքայելյան Օ.Ս. Ընթացիկ գնահատման նոր համակարգը՝ որպես կրթության որակի բարելավման խթան: Ուսուցչի ձեռնարկ / Օ.Ս. Միքայելյան, Ս.Օ.Միքայելյան.- Եր.: ՀՀ ԿԳ Կրթության ազգային ինստիտուտ, 2010, 80 էջ:

2. Վարդումյան Ս., եւ ուրիշներ, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ (ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար), Երեւան, Այրեքս, 2005թ. 407 էջ

3.Հայոց լեզվի և գրականության գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու , Երևան, Տիգրան Մեծ, 2007/ԿԱԻ, ԿԾԿ/, 128 էջ

4.Սարուխանյան Ս., Միրումյան Մ., Ն. Դիշաղաջյան, Փուլային ուսուցման եղանակ, Ե., 2014

5. Վարդումյան Ս., եւ ուրիշներ, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ (ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար), Երեւան, Այրեքս, 2005թ. 407 էջ

ԿԱՐԾԻՔ

Լ. Մինասյանի <<Դպրոցական թեստերի մշակման սկզբունքներն ու ձևերը>> վերնագրով

հոդվածի մասին

Հոդվածի հիմնախնդիրն արդիական է՝ պայմանավորված մասնավորապես սովորողների ձեռքբերումների գնահատման չափանիշների նկատմամբ ժամանակակից մոտեցումներով:

Հոդվածը շարադրված է գիտական չափանիշներին համապատասխան և գրագետ:

Հոդվածը երաշխավորում եմ տպագրության:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ջ. Գյուլամիրյան

04.03.22